մեց: Ու Լէնք Թիմուրը, ի նշան ուրախութեան, իր մէկ յօնքը վեր բարձրացրեց եւ նայեց ահարեկուած ստեղներին:

Այն օրից ի վեր, արիւնը ողողեց լայնատարած սեւ հողերը եւ բահը գետնի վրայ հեծեց, արօրը մահ եկաւ ռուս աշխարհի վրայ հարբած քայլերով եւ աղիքները տրորեց: Ցարը գաւազանի սրած ծայրը խոթեց ժողովրդի սրտին. Թիմուրի աչքով նայեց կոլորաձեւ գմբէթների առջեւ սողոսկող ամբոխներին եւ տիրեց: Ոսկեզօծ խաչերի տակ, երկայնավարս մուժիկները դունչ ծռեցին, կանայք թաւալ եկան եւ անտառների նման խիտ թափօրները, ստրուկօրէն երկրպագելով, բամբ վայնասունով տաղերգեցին:

Այն օրից ի վեր, խաների ոսկեճամուկ վրանները ստուերների նման շարունակեցին ծփալ: Ածիլած գլուխները, կատաղի ձիերի վրայ, դարերի մէջ ասպատակեցին, մրրիկի նման դաշտերի մէջ գլոր եկան եւ եկեղեցական մելամաղձոտ երգերի տակից ստրուկների հետ պոռթկացին:

Ցարը պատասխանեց մարակի ճողփիւնով եւ հրապարակների վրայ գլուխներ գլխատեց:

Ռուսական կեանքը՝ անողոք, բարբարոս, կամաղուրկ՝ ծովէ ծով վխտաց, եւ փոթորկամրրիկ երկնքի տակ, աչքերը բոցերով լեցուած, ճգնաւորեց: Կոյր հսկայի նման նա թաւալ եկաւ լայնածաւալ գետերի ափին եւ շրջթայակապ եղան պէս եղջիւրները գետինը խրուեց:

Թաթարը աղօթեց Իկօնի (սուրբի պատկեր) առջեւ, համբուրեց արծաթէ շրջանակը, եւ դառն մի աստուծոյ համբ բերանին, քայլեց դիւղէ դիւղ եւ քաղաքից քաղաք:

Թիմուրը նայում էր Լենինի աչքերին: Սամարղանդի իր բաղմայարկ դերեզմանի տակից նա դուրս էր հանում կմախքացած իր բազուկը եւ մութի մէջ գալարում էր իր մատները:

* * *

Մի օր, Շլիւսերբուրգի ամրոցում կախեցին Աղեքսանդր Ուլիանովին: Խաչը կոտրեց իր բազուկները եւ գլուխը վար առաւ:

Մինչ՝ ոսկեզօծ կոճակներով պետական պաշտօնեայ՝ հայր Ուլիանովը, պարապ տոպրակի նման «ծալուեց բազկաթոռի վրայ, ու մայրը ուշաթացուեց՝

Լենինը բացեց Կարլ Մարքսի «Կապիտալը» ու հեկեկալով կարդաց:

Թաթարի աչքերով, նա որոնեց գետնայարկերի մէջ թշուառների իր բանակը: Ընդթերի վրայ հաշիւ դրեց եւ անօթի ստամոքսների տակ ռումբ դետեղեց:

Բատրակների հետ խօսեց գլուխը թափահարող մրրիկի մասին:

Դիւղացու ցորենի ալիքները շարժեց,

Բանուորի մօտ կանգ առաւ, ու նօտատետրի մէջ արձանագրուած առաքելութիւնները՝ մանր թուաբանական կուտի նման թափ տրուաւ:

Պուդաչովը կանգնեց Պլաս Բլանշի վրայ եւ վազող ինքնաշարժերի անիւների տակ՝ քառասուն ութի եւ եօթանասուն մէկի հրացանների ճարճատիւնը լսեց: Կապոյտ շապիկներ հագած բանուորներ, հրացանը իրենց ձեռքին, Հիւգոյի ոտանաւորն էին յօրինում ու մելոդրամատիկ նախադասութիւնների հետ մեռնում:

Թիմուրը Կարլ Մարքսի վրանի առջեւ տրեպակա էր պարում: Ու Ժընէվից մինչեւ Վիեննա, մինչեւ Փարիզ, մինչեւ Լոնտոն, նըրա անհանդիստ ոդին թափառում էր կաղալով եւ ցատկռտելով. գործարանների մուխի շուրջը բոց էր դառնում եւ սուլոցների ձայնով դաշնակում էր մի նոր ապօկալիպս:

Մի նոր ապօկալիպս՝ բարակ թղթի վրայ գետնայարկներում տպուած, ուր անկարելի երկընքների տակ թեւաւոր վիշապներ էին ուրում, ուր եօթը հրեշտակների արծաթէ թեւերի վրայ համամարդկային երջանկութիւն էր կառուցւում, ուր մօտօրները մայում էին ոսկէ եղների նման եւ ուր քաղաքները դիւղերի առջեւ արծաթէ թոռ էին պարզում, հսկայ մամուկների նման:

Նոր այս տեսիլքի առջեւ ամբոխների նայուածքները պայթեցին, ինչպէս հասած վէրքեր:

Ջղագրգռուած մատեր թմբկեցին բոլոր պատուհանների վրայ եւ դարերի պատմութիւնները՝ Վերդէնից մինչեւ Ղարս՝ խրատուզուեցին, ինչպէս հակայ մի «Տիտանիք»:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան